ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՀԱՅԹԱՂ
ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ МАРЗ
ОБЩИНА
АЙТАХ

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, COMMUNITY OF HAYTAKH

«28» 12 2012թ. N 136.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Յարգարժան պարոն Ղահրամանյան

Կից Ձեզ ենք ներկայացնում Յայթաղ համայնքի ավագանու 21 դեկտեմբերի 2012 թվականին N3-Ն որոշումը, Յայթաղ համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին :

Առդիր 120 էջ:

Յայթաղ համայնքի ղեկավար՝ Ս.Վարդանյան

19-13
08 01 2013

Հավելված N 1

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
(մարզի անվանումը)

# ՀԱՅԹԱՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

# 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

**Հաստատված է Հայթաղ գյուղական համայնքի**
(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

**ավագանու 2012 թվականի 21 դեկտեմբեր -ի N 3-Ն որոշմամբ**
(ամիս ամսաթիվ)

**ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Վաղարշապատի ՏԳԲ**
(համայնքի բյուջեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Սամվել Խորենի Վարդանյան
(Անուն, հայրանուն, ազգանուն)

Բյուջեի մուտքերը կազմված են հետևյալ եկամուտներից և պաշտոնական տրանսֆերտներից

| Հ/հ | Եկամուտներ | Գումարը / հազ. դրամ / |
|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 11048.3 |
| 2 | Գույքահարկ | 4027.0 |
| 3 | Պետ պահուստի հողերի վարձավճր | 997.3 |
| 4 | ՀՀ պետ բյուջեից դոտացիա | 32209.0 |
| 5 | Տեղական տուրք | 250.0 |
| | | |
| | ընդամենը | 48531.6 |

Բյուջեյի եկամուտների հաշվին կատարվող ծախսերն ըստ գործառնական դասակարգման

| Հ/հ | Ծախսերը | Գումարը / հազ. դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | 2011թ | 2012թ | 2013թ |
| 1 | Գյուղապետարան | 25342.5 | 26800.5 | 28546.0 |
| 2 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն | 1300.0 | 1300 | 2500.0 |
| 3 | Անասնաբուժություն | 600.0 | 600.0 | 0.0 |
| 4 | Ոռոգում | 1900.0 | 0.0 | 0.0 |
| 5 | Աղբահանություն | 1500.0 | 1500.0 | 3500.0 |
| 6 | Այլ մշակույթային ծառայություն | 1000.0 | 1500.0 | 2000.0 |
| 7 | Հրատարակչություն | 200.0 | 200.0 | 250.0 |
| 8 | Սոց օգնություն | 3500.0 | 3500.0 | 4000.0 |
| 9 | Նախադպրոցական կրթություն | 0.0 | 9684.0 | 4380.0 |
| 10 | Ընդհանուր բնույթի ծառայություն | 0.0 | 0.0 | 350.0 |
| | Պահուստային ֆոնդ | 7835.6 | 973.8 | 3005.6 |
| | Ընդամենը | 43178.1 | 46058.3 | 48531.6 |

Գյուղապետարանի փաստացի աշխատողների թիվը, ըստ 2013թ-ի բյուջեյի:

| Հ/հ | Հիմնարկի անվանումը | 2013թ. | | |
|---|---|---|---|---|
| | | Հաստիքների քանակը | Աշխատավարձի ֆոնդը/հազ. դրամ/ | Աշխատողների թիվը |
| 1 | Գյուղապետարան | 10 | 13860.0 | 10 |
| 2 | Մշակույթի տուն | 4 | 3408.0 | 4 |
| | | | | |
| | Ընդամենը | 14 | 17268.0 | 14 |

## ՈՒՂԵՐՁ

### ՀԱՅԹԱՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 Թ. ԲՅՈՒՋԵԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով Ձեր քննարկմանն է ներկայացվում Հայթաղի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն:

Հայթաղի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեն կազմվել է համայնքի ղեկավարի քառամյա ծրագրի դրույթներին համապատասխան:

### ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

**Հայթաղի գյուղական համայնքի 2013թ. բյուջեով կանխատեսվել են եկամուտներ՝ ընդամենը 48531.6 հազար դրամ:**

Հայթաղի գյուղական համայնքի 2013թ. բյուջեով սեփական եկամուտները կանխատեսվել է 16322.6 հազար դրամ:

Պետական բյուջեից տրվող դոտացիան՝ 32209.0 հազար դրամ:

2013 թվականին հարկերի գծով նախատեսվել է 15075.3 հազար դրամ, որից 768.6 հազար դրամ շենք. շին. գույքահարկ, 11048.3 հազար դրամ հողի հարկ և 3258.4 հազար դրամ փոխադրամիջոցների գույքահարկ:

Կանխատեսման համար հիմք է հանդիսացել գույքահարկի և հողի հարկի հաշվարկման և գանձման հաշվարկները: Գույքահարկը կանխատեսվել է հաշվի առնելով գանձելիության մակարդակը:

Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման

թույլտվության վճարների գծով՝ տեղական տուրքեր նախատեսվել է 250.0 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհների գծով՝ դոտացիա 32209.0 հազար դրամ՝ հիմք «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:

Այլ եկամուտների գծով նախատեսվել է 997.3 հազար դրամ:

Եկամուտները ըստ եկամտատեսակների՝ կից հավելված 1-ին համապատասխան՝ կից տեղեկություններ:

Նախորդ 2011 թվականի փաստացի կատարված, 2012թվականի հաստատված և 2013 թվականի նախատեսված եկամուտների համեմատականը կցվում է (համեմատական 1):

## ԾԱԽՍԵՐ

Հայթաղի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեով ծախսերը նախատեսվել են՝ ընդամենը 48531.6 հազար դրամ, այդ թվում՝

Ընթացիկ ծախսերի գծով՝ 48531.6 հազար դրամ:

Հայթաղի գյուղական համայնքի 2013 թվականի բյուջեով նախատեսված ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման կցվում է (հատված 2,3,6):

Համայնքի 2013 թվականի բյուջեի ծախսերը հաշվարկելիս առաջնորդվել ենք 2011-2012թ,թ բյուջեի փաստացի կատարված և 2013թ. սպասվելիք ծախսերով:

## ԾԱԽՍԵՐԸ ԲԱՇԽՎԵԼ ԵՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 01 ԲԱԺԻՆ

ԸՆԴՀԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ~ 319366.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» ԱՅԴ ԹՎՈՒՄ

01 բաժին 1 խումբ 1 դաս՝ «օրենսդիր և գործադիր մարմիններ» ծրագրով նախատեսվել է 28546.0 հազար դրամ:

01 բաժնի 3 խմբի 3 դասի «ընդհանուր բնույթի ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 350.0 հազար դրամ:

01 բաժին 6 խումբ 1 դաս՝ «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 2500.0 հազար դրամ:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 05 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 3500.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

05 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Աղբահանում» ծրագրով 3500.0 հազար դրամ՝ համայնքում աղբաթափության ծրագիր իրականացնելու համար:

ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ 08 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 2250.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

08 բաժին 2 խումբ 4 դաս՝ «Այլ մշակութային հիմնարկներ» ծրագրով 2000.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են համայնքային նշանակության միջոցառումների գծով ծախսերը:

08 բաժին3 խումբ 2 դաս՝ «Հրատարակչություններ, խմբագրություններ» ծրագրով 250.0 հազար դրամ:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 09 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 4380.0 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

09 բաժին 1 խումբ 1 դաս՝ «Նախադպրոցական կրթություն» ծրագրով 4380.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել է մանկապարտեզին տրվող սուբսիդիան:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 10 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 4000.0ՀԱԶԱՐ ԴՐԱՄ, ԱՅԴ ԹՎՈՒՄ

10 բաժին 7 խումբ 1 դաս՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրով նախատեսվել է 4000.0 հազար դրամ: Այս ծրագրում ընդգրկվել են թաղման ծախսերի մասնակի հատուցման համար, սոցիալապես անապահով խավերին մասնակի օգնության կազմակերպություններին աջակցության և նվիրատվության համար ծախսերը: Օգնությունները տրվում են տարին մեկ անգամ՝ համայնքի ղեկավարի որոշմամբ՝ քաղաքացիների դիմումների ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ 11 ԲԱԺԻՆ

ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ 3005.6 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ , ԱՅԴ ԹՎՈՒՄ

11 բաժին 1 խումբ 2 դաս՝«ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ» 3005.6 հազար դրամ:

Պահուստային ֆոնդը կարող է օգտագործվել տվյալ տարվա

չկանխատեսված ծախսերի համար՝ միայն համայնքի ավագանու որոշմամբ:

Նախորդ 2011 թվականի փաստացի կատարված, 2012 թվականի հաստատված և 2013 թվականի նախատեսված ծախսերի՝ գործառնական և տնտեսագիտական դասակարգման, դեֆիցիտի, մարման աղբյուրների, առանձին ցուցանիշների համեմատականները կցվում են (համեմատական 2,3,4,5,6):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N3-Ն ՈՐՈՇՄԱՆ

# 2013ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԹԱՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| h/h | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաստիքային միավորը | Պաշտոնի դրույքը |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 177000 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 120000 |
| 3 | Համայնքի ղեկավար օգնական | 1 | 108500 |
| | Աշխատակազմ | | |
| 1 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 120000 |
| 2 | Առաջատար մասնագետ | 2 | 115000 |
| 3 | Առաջին կարգի մասնագետ | 1 | 108500 |
| 4 | Երկրորդ կարգի մասնագետ | 2 | 97000 |
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| 1 | Մշակույթի տան վարիչ | 1 | 97000 |
| 2 | համակարգչային օպերատոր | 1 | 97000 |
| 3 | Գրադարանավարուհի | 1 | 62500 |
| 4 | Պահակ | 1 | 74000 |
| 5 | Հավաքարար | 1 | 50500 |
| | Ընդամենը | | 1439000 |

Հայթաղ համայնքի ղեկավար՝ Ս. Վարդանյան

ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

21 դեկտեմբերի 2012թվականի N3-Ն որոշումը
գ. Հայթաղ
ՀԱՅԹԱՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղական ինքնակառավարման մասին «Հայաստանի Հանրապետության 2002թ.-ի մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և» բյուջետային համակարգի մասին Հայաստանի Հանրապետության 1997 թ-ի հունվարի 24-ի օրենքի 32-րդ հոդվածի համաձայն համայնքի ավագանին որոշում է.
հաստատել Հայթաղ համայնքի բյուջեն՝
ա / եկամուտների գծով 48531.6 հազար դրամ
բ / ծախսերի գծով՝ 48351.6 հազար դրամ

Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ հատված 1,

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ հատված 2,

Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատված 3,

Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/ հատված 4: Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները, հատված 5:

ՀՀ «Բյուջետային համակարգի մասին » օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համապա-կասխան թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում

կատարել վերաբաշխումներ հոդվածների միջև՝չգերազանցելով հաստատված ծավալի 15%-ը:

1. Վ. Հայրապետյան
2. Ա. Ալեքսանյան
3. Ա. Արշակյան
4. Ն. Գևորգյան
5. Հ. Բաղդասարյան
6. Յու. Համբարձումյան
7. Գ. Մելքոնյան
8. Վ. Խաչատրյան
9. Գ. Մովսիսյան

Հայթաղ համայնքի ղեկավար՝ Ա. Վարդանյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԹԱՂ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-ի N3-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀՀ Արմավիրի մարզի Հայթաղ համայնքի մանկապարտեզի հաստիքային միավորներն ու պաշտոնական դրույքաչափերը

3. Աշխատակիցների թվաքանակը՝ 11
6. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | | | 1.0 | 80000 |
| 2 | Տեղակալ | | | 1.0 | 70000 |
| 3 | Հաշվապահ | | | 1.0 | 70000 |
| 4 | Ավագ դաստիարակ | | | 1.0 | 70000 |
| 5 | Ավագ դաստիարակ | | | 1.0 | 70000 |
| 6 | Դաստիարակ | | | 1.0 | 70000 |
| 7 | Դաստիարակ | | | 1.0 | 70000 |
| 8 | Խոհարար | | | 1.0 | 60000 |
| 9 | Բուժ քույր | | | 1.0 | 60000 |
| 10 | Պահակ | | | 1.0 | 60000 |
| 11 | Հավաքարար | | | 1.0 | 50000 |
| | | | | | 730000 |

Հայթաղ համայնքի ղեկավար՝ Մ. Վարդանյան

## Համայնքի ղեկավարի զեկույցը համայնքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Համայնքի բյուջեի ձևավորման, օրենսդրորեն սահմանված կարգով քննարկման , ընդունված բյուջեի կատարման և վերահսկության հետ կապված գործունեությունը այն հիմնական խնդիրներն են, որոնցով բնութագրվում և որոշվում են ինքնակառավարման մարմինների էությունն ու վիճակը, նախանշված ծրագրերի արդյունավետությունն ու օգտակարությունը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, եկամուտների արդյունավետ հավաքագրումի ու դրանց առավել արդյունավետ օգտագործումից:

2013 թվականի համայնքային բյուջեն, կազմելու ժամանակ համայնքը իր առջև դրել է հետևյալ նպատակները՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը,
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների մակարդակը և որակը,
- Ընդլայնել համայնքի երիտասարդական մշակութային միջոցառումների հատկացվող նյութական և ֆինանսական օժանդակությունը,
- Մարզադաշտի վերանորոգման ուղված ծրագիրը,
- Բարելավել խմելու ջրի ներտնտեսային ցանցի վիճակը:
- Բարելավել ոռոգման ջրի ներտնտեսային ցանցի վիճակը:
- Համայնքի չլուսավորված փողոցների լուսավորության ապահովումը
- Փակ և բաց դրենաժային համակարգի նորոգումը
- Ճանապարհների վերանորոգմանը ուղղված ծրագրերը
- Համայնքի փողոցների , մշակույթի տան հարակից տարածքների աղբահանություն և ծառատունկի կազմակերպում
- Ակտիվ համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ համայնքի հիմնախնդիրները ուսումնասիրելու և ծրագրեր մշակելու համար:

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, շահագրգիռ մոտեցում ցուցաբերել համայնքի 2013 թվականի բյուջեի միջոցների գոյացման և նպատակային ծախսման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ